ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

գ. Փարաքար 04.06.2025թ.

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի «Մշակույթի և երիտասարդության պալատ» ՀՈԱԿ-ի դահլիճում տեղի է ունեցել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստ, մասնակցությամբ՝ հանձնաժողովի նախագահ՝ Էդգար Մարգարյանի, հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Անյուտա Սաֆարյանի, հանձնաժողովի քարտուղար՝ Արաքսյա Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Էմմա Թորոսյանի, Լուսինե Սիմոնյանի, Արամ Մնացականյանի, Անի Տեր-Խաչատրյանի, Սաթենիկ Պետրոսյանի:

Հանձնաժողովի նիստին ներկա էր նաև դիմումատու Սոնա Սուրենի Աբրահամյանը (ծնված՝ 1979 թվականի մարտի 03-ին, անձնագիր՝ AL0217504, տրված 2023 թվականի ապրիլի 19-ին, 057-ի կողմից, ՀԾՀ 5303790029), հաշվառված՝ ՀՀ Արմավիրի մարզ համայնք Փարաքար գյուղ Մերձավան Մուսալեռի փողոց տուն 29 հասցեում և նույն հասցեում հաշվառված նրա անչափահաս որդին՝ Միքայել Արմենի Սուքիասյանը (ծնված 2013 թվականի հունվարի 25-ին, ծննդյան վկայական՝ ԱԲ 248100, ՀԾՀ 3521130347):

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ համայնք Փարաքար գյուղ Մերձավան Մուսալեռի փողոց տուն 29 հասցեի բնակչուհի Սոնա Սուրենի Աբրահամյանի 2025 թվականի մայիսի 12-ի N 2084 դիմումի քննարկումն է՝ իր անչափահաս երեխային՝ ՀՀ Արմավիրի մարզ համայնք Փարաքար գյուղ Մերձավան Մուսալեռի փողոց տուն 29 հասցեի բնակիչ՝ Միքայել Արմենի Սուքիասյանին (ծնված 2013 թվականի հունվարի 25-ին, ծննդյան վկայական՝ ԱԲ 248100, ՀԾՀ 3521130347) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող՝ 04-065-0039-0022-002-003 կադաստրային ծածկագրով, 31.4 ք.մ. մակերեսով բնակարանի 1/8 բաժնեմասը օտարելու վերաբերյալ:

Դիմումատուն դիմումին կից ներկայացրել է հետևյալ փաստաթղթերը՝

1. Սոնա Սուրենի Աբրահամյանի անձնագրի և ՀԾՀ պատճենները
2. Միքայել Արմենի Սուքիասյանի ծննդյան վկայականի և ՀԾՀ պատճենները
3. Ամուսնու մահվան վկայականի պատճենը
4. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի պատճենը
5. Տեղեկանք Սոնա Սուրենի Աբրահամյանի հաշվառման վերաբերյալ
6. Տեղեկանք ընտանիքի անդամների հաշվառման վերաբերյալ

Զեկուցող՝ Է.Մարգարյան

Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) Արմավիրի մարզ համայնք Փարաքար գյուղ Մերձավան Մուսալեռի փողոց տուն 29 հասցեի բնակչուհի Սոնա Սուրենի Աբրահամյանի (ծնված՝ 1979 թվականի մարտի 03-ին, անձնագիր՝ AL0217504, տրված 2023 թվականի ապրիլի 19-ին 057-ի կողմից), N 2084 դիմումի ուսումնասիրության նպատակով կատարել է տնայց:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ

Սոնա Սուրենի Աբրահամյանի (ծնված՝ 1979 թվականի մարտի 03-ին, անձնագիր՝ AL0217504, տրված 2023 թվականի ապրիլի 19-ին 057-ի կողմից) ամուսինը՝ Արմեն Վլադիմիրի Սուքիասյանը, մահացել է 2018 թվականի հունվարի 17-ին (մահվան վկայական՝ ԱԲ283508): Սոնա Աբրահամյանի անչափահաս երեխան՝ Միքայել Արմենի Սուքիասյանը, հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 04-065-0039-0022-002-003 կադաստրային ծածկագրով 31,4 ք.մ. մակերեսով բնակարանի 1/8 բաժնեմասի բաժնետերը: Անհրաժեշտություն է առաջացել վաճառելու վերը նշված բնակարանը: Բնակարանի վաճառքից ստացված գումարը Սոնա Սուրենի Աբրահամյանը նախատեսում է օգտագործել ի շահ իր անչափահաս որդու՝ Միքայել Արմենի Սուքիասյանի: Բնակարանի 1/8 բաժնեմասը օտարելու համար պահանջվում է Փարաքար համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը .

Հանձնաժողովը որոշեց.

Թույլատրել Սոնա Սուրենի Աբրահամյանին (ծնված՝ 1979 թվականի մարտի 03-ին, անձնագիր՝ AL0217504, տրված 2023 թվականի ապրիլի 19-ին 057-ի կողմից) օտարելու իր անչափահաս երեխային՝ Միքայել Արմենի Սուքիասյանին (ծնված 2013 թվականի հունվարի 25-ին, ծննդյան վկայական՝ ԱԲ 248100, ՀԾՀ 3521130347) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող բնակարանի 1/8 բաժնեմասը:

Հանձնաժողովի նախագահ՝	_____	Է.Մարգարյան
Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝	_____	Ա. Սաֆարյան
Հանձնաժողովի քարտուղար՝	_____	Ա. Սարգսյան
Հանձնաժողովի անդամներ՝	_____	Է. Թորոսյան
	_____	Լ. Սիմոնյան
	_____	Ա.Մնացականյան
	_____	Ա. Տեր-Խաչատրյան
	_____	Ս.Պետրոսյան